ԿԱՐԾԻՔ

ԼԻԴԱ ԱՐՄԵՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ «ԲԱՆԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում պարտադիր պահուստավորման նորմատիվի գործող համակարգի վերլուծությանը և բանկային պարտավորությունների պահուստավորման այլընտրանքային համակարգի մշակմանը:

Հաշվի առնելով, որ բանկային համակարգի գոյության ամբողջ ընթացքում և ներկայումս գոյություն է ունեցել և շարունակում է գոյություն ունենալ խորը իրացվելիության ճգնաժամերի և առևտրային բանկերի վճարունակության ռիսկը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո մեծ ուշադրություն է դարձվում ֆինանսական կայունության վերաբերյալ կենտրոնական բանկերի քաղաքականությանը, ինչը հանգեցրել է պարտադիր պահուստավորման և պահուստային հատուցումների նորմատիվի նկատմամբ հետաքրքրության վերականգնմանը: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո աշխարհում պարտքային պարտավորությունների հարաբերակցությունն ՀՆԱ-ի նկատմամբ աճել է 25%՝ հասնելով 322%: Մինչև 2008 թվականը կուտակված պարտքը և ճգնաժամից հետո դրա մակարդակի բարձրացումը գլոբալ տնտեսության հետճգնաժամային այսքան երկար վերականգնման հիմնական խնդիրն է: Որոշ գիտնականների հետազոտությունների համաձայն, այս խնդիրների հիմնական աղբյուրը դրամական մուլտիպլիկատորն է: Հայտնի է, որ ավանդների ընդլայնման մուլտիպլիկատորի ազդեցությունը նվազեցնելու համար Կենտրոնական բանկն անհրաժեշտ մակարդակում, կիրառում է դրամավարկային քաղաքականության այնպիսի գործիք, ինչպիսին է պահուստավորման նորմը: Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը ներկայումս հանդիսանում է երկրի ֆինանսական հատվածի առավել զարգացած մասը, սակայն իրացվելիության և բանկերի վճարունակության ռիսկը

միշտ մնում է ՀՀ Կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում: Այսպիսով, հետազոտության թեմայի արդիականությունն պայմանավորված է Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի պարտավորությունների պահուստավորման համակարգի զարգացմանը, որի շնորհիվ հնարավոր է լուծել վերը նշված խնդիրները:

Գրախոսվող աշխատանքն այդպիսի նպատակ է հետապնդում, որտեղ հետազոտվում են պարտադիր պահուստավորման նորմատիվի կիրառման հետ կապված հիմնական խնդիրները և առաջարկվում է բանկային պարտավորությունների պահուստավորման այլընտրանքային համակարգ: Վերոնշյալով պայմանավորված կարևորվում է ատենախոսության թեմայի ***արդիականությունը և հրատապությունը***:

Կառուցվածքային առումով հետազոտությունն իրականացված է ատենախոսությունում քննարկվող հիմնախնդիրների և դրանց վերաբերող հարցերի լուծման տրամաբանական հաջորդականության ապահովման սկզբունքով: Նախաբանում հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը և ստացված արդյունքների գործնական նշանակությունը, հստակ սահմանված է հետազոտության նպատակները և ներկայացված են դրանց հասնելու հիմնական ուղիները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը կազմված է 187 էջից՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը 7 և հավելվածները:

Ատենախոսության առաջին «Պարտադիր պահուստավորման գործիքի դերն ու տեղը ժամանակակից աշխարհում» գլխում ներկայացվել են բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման գործիքի տեսական և մեթոդաբանական հիմքերը, գործառույթները, իրականացվել է պահուստավորման նորմի գործիքի էության վերաբերյալ առկա հայացքների վերլուծություն, ինչպես նաև քննարկվել է պահուստային պահանջների քաղաքականության այլընտրանքային

մոտեցումը: ***Ատենախոսության երկրորդ՝*** «Ժամանակակից ֆինանսական համակարգի վերլուծությունը պարտադիր պահուստավորման գործիքի կիրառման համատեքստում» գլխում վերլուծվել է զարգացած և զարգացող երկրներում պարտադիր պահուստավորման նորմատիվի կիրառման միջազգային փորձը, ինչպես նաև համաշխարհային ֆինանսական համակարգի վիճակը բանկային կարգավորման ոլորտում: ***Ատենախոսության երրորդ՝*** «ՀՀ բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման համակարգի արդիականացում» գլխում իրականացվել է ՀՀ բանկային համակարգի, մասնավորապես, պահուստային պահանջների համակարգի, վերլուծություն, SVAR մոդելի կիրառմամբ իրականացվել է ՀՀ-ում գործող բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման ռեժիմի ազդեցության գնահատումը երկրի մակրոտնտեսական վիճակի վրա, ինչպես նաև մշակվել է բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման համակարգի արդիականացման այլընտրանքային մոտեցում:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում ներկայացված մոտեցումները մշակելիս, հեղինակը հիմնվել է քննարկվող հիմնահարցերն ուսումնասիրած առաջատար մասնագետների և կառույցների հետազոտությունների վրա, իսկ որպես տեղեկատվական բազա օգտագործել է բազմաթիվ վիճակագրական նյութեր և տվյալներ:

Հետազոտության ***հիմնական գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ իրականացված ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում առաջարկվել և մշակվել է բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման համակարգի արդիականացման այլընտրանքային մոտեցում՝ հիմնված երկարաժամկետ ավանդների զրոյական պահուստավորման և կարճաժամկետ բանկային պարտավորությունների 100%-ի չափով պահուստավորման սկզբունքի վրա, անկախ ավանդների արժույթից: Աշխատանքում

քննարկված սկզբունքները, տեղ գտած առաջարկություններն ու եզրակացություններն ունեն ***տեսական և գործնական*** կարևոր նշանակություն:

Այնուամենայնիվ, ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից: Մեր կողմից նկատված թերությունների վերաբերյալ ***դիտողություններն*** հետևյալն են՝

1. Աշխատանքում առաջարկվում է ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի կողմից ՀՀ դրամով և արտարժույթով ներգրավված ցպահանջ ավանդների և մինչև մեկ տարի ժամկետով ներգրավված ժամկետային ավանդերի դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանել 100%, իսկ մեկ տարուց ավելի ժամկետով ներգրավված ժամկետային ավանդերի դիմաց՝ 0%: Հեղինակի առաջարկը հեռանկարային է և հրատապ: Լավ կլիներ, որ հեղինակի կողմից վերը նշված առաջարկությունը լիներ ավելի խորը ուսումնասիրված, միևնույն ժամանակ ներկայացվեր որոշակի հաշվարկների միջոցով:
2. Ատենանախոսության 3.3 ենթագլխում հեղինակը քննարկում է տնտեսական ճգնաժամերի վերացման հնարավորությունը՝ բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման այլընտրանքային համակարգի ներդրման շնորհիվ, սակայն հեղինակի կողմից չեն ներկայացվում տվյալ մոդելի ներդրման հետևանքները բանկային համակարգի իրացվելիության և վճարունակության մակարդակի վրա:
3. Ատենախոսությունը կշահեր, եթե իրականացվեին համապատասխան վերլուծություններ, կապված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից պարտադիր պահուստավորման և վերաֆինանսավորման տոկոսադրույքի գործիքների կիրառելիության վերաբերյալ՝ դիտարկելով բանկերի կողմից ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների կառուցվածքի փոփոխության ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա:
4. Ատենանախոսության 3-րդ գլխում հեղինակը ներկայացնում է ՀՀ երկրորդական պարտքային շուկայի ծագման միտքը, սակայն ինչքանո՞վ է մեր

ֆինանսական շուկան պատրաստ նման վերակազմավորման, լավ կլիներ հեղինակի կողմից ներկայացվեր ավելի խորը հիմնավորումներով վերլուծություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Դրանք հետապնդում են բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման այլընտրանքային համակարգի հետագա աշխատանքների կատարելագործման նպատակ:

Լ. Մնացականյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտագործնական բարձր նշանակություն: Հեղինակն իրականացրել է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում առաջադրված և լուծված են Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կարևոր և արդիական հիմնախնդիրները:

Աշխատանքում մշակված առաջարկությունների և կատարված եզրահանգումների մի մասը կարող են օգտագործվել ՀՀ ԿԲ-ի կողմից պարտադիր պահուստավորման համակարգի բարելավելու և ավելի ճշգրիտ հաշվարկելու պահուստավորման նորմատիվը: Հարկ է նշել, որ հեղինակի կատարած լայնածավալ վերլուծությունները հագեցած են տնտեսամաթեմատիկական գործիքներով, որոնք օգնում են ավելի ամուր հիմք դնել մի շարք առաջարկությունների արդյունավետությունը գնահատելու համար: Հատկանշական է նաև հեղինակի կողմից առաջարկվող պարտադիր պահուստավորման համակարգի արդիականացման այլընտրանքային մոտեցման կիրառումը, որը կնպաստի ՀՀ ֆինանսական հատվածի կայունությանը:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի տասնմեկ գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ընդանուր առմամբ, Լ. Մնացականյանի «Բանկային պարտավորությունների պահուստավորման համակարգի զարգացումը (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար, պ.գ.թ. Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ